ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Հ-26

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «21» հունվարի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության սոց. և իր-քի ի-տը ի դեմս

(կազմակերպության անվանումը)

տնօրեն Գևորգ Պողոսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է

(անուն, ազգանուն)

Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն) ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 50291.2 հազ.դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հ< ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ

տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 50291.2հազ.դրամ (հիսուն միլիոն երկու հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ
թվերով և բառերով)

## 4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 46267,9 (քառասունվեց միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությանները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրության)

Գ.Տ.

ՀՀԳԱԱ Փիլիսոփայության սոց.և իր-քի ի-տ
ք.Երևան Արամի 44
Հայէկոնոմբանկ կ-ն 163008102549
ՀՎՀՀ 02508174
Տնօրեն Գ. Պողոսյան

(ստորագրության)

Գ.Տ.

Հավելված 1
« 21 » հունվարի 2015թ.
N 2-26 պայմանագրի

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հայ իրականության պատմա-փիլիսոփայական,սոցիալ-քաղաքական
և իրավագիտական ուսումնասիրություններ
(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե**
2. **Աշխատանքի նպատակը**

ՀՀ 2015թ. պետբյուջեից բազային ֆինանսավորման համար առաջադրված գիտական ծրագրի հիմնական նպատակն է հայ հասարակության պատմական և մշակութային ավանդույթների, դրանց զարգացման միտումների ուսումնասիրությունը, ինչպես նաև արդի Հայաստանում քաղաքացիական հասարակության, իրավական պետության, սոցիալական և քաղաքական ինստիտուտների ձևավորման գործընթացների փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդրիների հետազոտությունն ու վերլուծությունը:

**3.Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում):**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ ծրագրում նշված նպատակներին հասնելու համար ինստիտուտը ունի գիտության համապատասխան ուղղություններով անհրաժեշտ մասնագետներ, այդ թվում՝ երկու ակադեմիկոս, մեկ թղթակից անդամ, 9 գիտության դոկտորներ, 12 թեկնածուներ, ինչպես նաև ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում երիտասարդ գիտաշխատողների կադրեր պատրաստելու հնարավորություն: Ինստիտուտն ունի բոլոր անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներ գիտական ուսումնասիրություններ անցկացնելու համար՝ գիտաշխատողների համար հարմարավետ աշխատասենյակներ, համակարգիչներ և այլ սարքավորումներ, ներքին համակարգչային ցանց, գիտական գրադարան և հասանելիություն էլեկտրոնային գրադարանային աղբյուրներին, ինտերնետային կայքէջ և այլն: Գիտական անձնակազմը ունի բազմամյա ձեռքբերումներ ու լուրջ գիտական փորձ: Ընդ որում, գիտաշխատողները ամեն տարի մասնակցում են բազմաթիվ միջազգային գիտական համաժողովներին ու քննարկումներին, ընդգրկված են տարբեր միջազգային ծրագրերում, համագործակցում են ԱՊՀ և Եվրոպական երկրների մի քանի հետազոտական ինստիտուտների հետ: Ինստիտուտը գիտական համագործակցության պայմանագրեր ունի Ռուսաստանի Դաշնության ԳԱ Փիլիսոփայության ինստիտուտի և Սոցիոլոգիայի ինստիտուտի հետ, ՌԴ ԳԱ Սիբիրի մասնաճյուղի Փիլիսոփայության ինստիտուտի հետ, Մոլդովայի ԳԱ Սոցիոլոգիայի ինստիտուտի հետ, Ռումինական Ակադեմիայի Սոցիոլոգիայի ինստիտուտի հետ:

Տեսական մշակումներից բացի անհրաժեշտ է ապահովել նաև կիրառական հետազոտությունների իրականացման համար արտաբյուջետային ֆինանսական միջոցոնորի հայթայթում: Այդ պատճառով, նախատեսվում է ապահովել լրացուցիչ

ֆինանսական միջոցներ: Նախորդ տարիներին Ինստիտուտին հաջողվել է նման արտաբյուջետային և գրանտային միջոցներ ներգրավել մի շարք կիրառական սոցիոլոգիական և քաղաքագիտական ուսումնասիրություններ իրականացնելու համար:

**4.Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հետազոտությունները տարվում են չորս գիտական ուղղություններով՝ փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն:

2015թ.-ին նախատեսվում է ուսումնասիրություններ ծավալել տեսական փիլիսոփայության բնագավառում՝ հումանիտար գիտությունների մեթոդաբանական, փիլիսոփայական հիմնախնդիրների վերլուծության վերաբերյալ, որոնք կենտրոնական տեղ են զբաղեցնում ժամանակակից տեսական փիլիսոփայության և մեթոդաբանության հայեցակարգերում: Իրականացվելու են գիտական ուսումնասիրություններ ժամանակակից տրամաբանության հիմնարար գաղափարների բովանդակության մեկնաբանության ուղղությամբ՝ մաթեմատիկական տրամաբանության կայացման գործընթացի տեսակետից: Ինչպես նաև շարունակվելու են հետազոտությունները՝ ուղղված գիտության փիլիսոփայության հայեցակարգերին՝ որպես գիտության պատմության կարևոր դրվագների արտահայտման:

Հայ փիլիսոփայության հարուստ ժառանգությունը լուրջ մասնագիտական ուսումնասիրության ու վերլուծության կարիք ունի: Դարերի ընթացքում հայ մտածողները ստեղծել են հարուստ փիլիսոփայական մշակույթ, որի զգալի մասը դեռևս ուսումնասիրված չէ և գտնվում է ձեռագրերի տեսքով: Նախորդ տարիներին հայ փիլիսոփայության պատմության բնագավառում Ինստիտուտում իրականացված ուսումնասիրություններն ընթացել են մի քանի ուղղություններով, ուսումնասիրվել և լուսաբանվել են հայ ականավոր մտածողների՝ Դավիթ Անհաղթի, Հովհաննես Սարկավագի, Վահրամ Ռաբունու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Անանիա Շիրակացու, Հովհաննես Տերոյենցի, Սարգիս Բերիացու, Մաղաքիա Օրմանյանի, Բարդուղիմեոս Բոլոնիացու և այլոց փիլիսոփայական, տեսական-գաղափարախոսական ժառանգության տեղն ու դերը հայ փիլիսոփայության, մշակույթի պատմության համատեքստում: 2015թ. տեսական և վերլուծական աշխատանքներ կտարվեն հայ մեծ փիլիսոփաներ Հովհան Որոտնեցու և Հովհաննես Սարկավագի մտավոր ժառանգության և փիլիսոփայական աշխատությունների ժամանակակից մեկնաբանման ուղղությամբ: 2015թ.-ին նախատեսվում է տպագրության հանձնել հայ մեծ փիլիսոփա Հովհան Որոտնեցու 700 ամյակին նվիրված մենագրություն և Գրիգոր Մագիստրոսի 1025 ամյակին նվիրված գիտական հոդվածներ: Անդրադարձ է կատարվելու նաև հայ մեծ մտածող Մխիթար Գոշի իրավաքաղաքական հայացքների արդիական վերլուծությանը:

Ինստիտուտում շարունակվելու են հայ գեղագիտական մտքի ականավոր գործիչների աշխատությունների վերլուծությունն ու տպագրությունները: 2015թ.-ին շարունակվելու են աշխատանքներ «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» մատենաշարի 9-րդ գրքի պատրաստման ուղղությամբ: Առաջիկա 2015թ. ուսումնասիրվելու են հայ մշակույթի այն արժեքները, որոնցում գեղագիտությունը միահյուսվում է հոգևորի և բարոյականի հետ, քանի որ կատարվելիք աշխատանքները թույլ են տալիս նորովի ներկայացնել, արժևորել ազգային մշակութային բազմազան երևույթները՝ բացահայտելով մշակույթի համակարգում

գեղագիտականի յուրօրինակ դրսևորումները: 2015թ.-ին նախատեսվում է իրականացնել Հայոց Ցեղասպանության հիմնախնդրի փիլիսոփայական վերլուծություն:

2015թ.-ին սոցիալական, իրավական և քաղաքական հիմնարար և բազմակողմանի վերլուծություններ կիրականացվեն Հայաստանում ընթացող արդի գործընթացների, դրանց հետևանքների բացահայտման ուղղությամբ: Այսպես, սոցիոլոգիայի բնագավառում շարունակվելու են ուսումնասիրություններ՝ նվիրված արդի հայ հասարակությունում ծավալվող քաղաքական և քաղաքացիական նորառաճ շարժումների ձևավորման համատեքստում: Մասնավորապես, ուսումնասիրվելու է երկրում շարունակվող արտագաղթի և բնակչության միգրացիոն տրամադրությունների արդի վիճակը, բնակչության սոցիալական և քաղաքական օտարման գործընթացը: Հայոց ցեղասպանության 100-ամյակի տարելիցին նվիրված՝ սոցիոլոգիական ուսումնասիրություն է կատարվելու հայ-թուրքական փոխհարաբերությունների, փոխադարձ դիրքորոշումների, ինչպես նաև թուրքիայի իշխանություններից հայ հասարակության ակնկալիքների վերաբերյալ:

Քաղաքագիտական ուսումնասիրությունների բնագավառում շարունակվելու են աշխատանքներ երկրի քաղաքական արդիականացման ուղղությամբ, որի շրջանակներում ուսումնասիրվելու են ՀՀ-ում քաղաքական մշակույթի արդիականացման նախադրյալները, քաղաքական դիսկուրսի առանձնահատկությունները, ազգային անվտանգության ռազմավարական հիմնախնդիրները, այդ թվում՝ ԼՂՀ հակամարտության հիմնահարցը: ՀՀ-ի անդամակցությունը Եվրասիական միությանը անհրաժեշտություն է առաջացնում ուսումնասիրել անդամակցող պետություններում քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, դրանց միջև նմանություններն ու տարբերությունները, ինչը հնարավորություն կստեղծի կանխատեսել ձևավորվող միությունների կոնսոլիդացիայի և արդյունավետ գործառնության հիմքերն անդամ-պետությունների համար: Ներկայացվելու է հայ-թուրքական հարաբերությունների արդյունքում առաջացած հայոց հիմնահարցի վերլուծությունը, ինչպես նաև 1915թ. ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ թուրքական պետական իշխանության կողմից ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման քաղաքական վերլուծությունը:

Պետաիրավական հետազոտությունների բնագավառում ինստիտուտում նախատեսվում է աշխատանքներ կատարել հայոց պետականության և օրենսդրության հետագա զարգացումների, գործող օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև սահմանադրաիրավական, դատաիրավական բարեփոխումների նոր փուլի հետազոտության ուղղությամբ: Իրավաբանների ուշադրության կենտրոնում շարունակվելու են մնալ իրավաստեղծ գործունեության տեսական և կիրառական հիմնախնդիրները, ՀՀ դատական համակարգի, քրեական իրավունքի և անվտանգության, այդ թվում՝ երկրի անվտանգության ռազմաիրավական հայեցակարգի հիմնախնդիրները և դրանց վերլուծությունը: 2015թ. իրականացվելու են ուսումնասիրություններ՝ նվիրված իրավունքի տեսությանը, իրավունքի բնական և պատմական հիմունքներին և իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրներին: Աղբյուրագիտական հենքի վրա ուսումնասիրվելու են միջնադարյան Հայաստանի իրավունքի աղբյուրները, իրավական միտքն ու պետաիրավական ինստիտուտները, վերլուծվելու է 18-րդ դարի հայ մեծ իրավագետ Շահամիր Շահամիրյանի սահմանադրաիրավական հայեցակարգը: Իրականացվելու է

վերլուծություն անձի իրավական դրության հիմնախնդիրների բազմակողմանի տեսական-իրավական վերլուծություն արդի ժողովրդավարական, իրավական պետությունում, որի նպատակն է բացահայտել անձի իրավունքների, ազատությունների, պարտականությունների, առանձնահատկություններն ու հիմնախնդիրները պետություն-մարդ փոխհարաբերություններում, ինչպես նաև դրա հիման վրա ներկայացվելու են օրենսդրական կատարելագործմանն ուղղված առաջարկություններ: Նշված ուսումնասիրությունների արդյունքները իրենց արտացոլումը կստանան «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. Տեսական-իրավական վերլուծություն» մենագրության և մի շարք գիտական հոդվածներում:

Հայոց Ցեղասպանության 100-ամյակին նվիրված, նախատեսվում է իրականացնել միջդիսցիպլինար ուսումնասիրություն ցեղասպանության իրավական հիմնախնդիրների վերաբերյալ, ներառյալ՝ փոխհատուցման իրավական հարցերը, ինչպես նաև դատարանների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներն ու որոշումները:

Իրականացվող գիտական աշխատանքները կոչված են ապահովելու բազմադիսցիպլինար ուսումնասիրություն, որը ներառում է սոցիոլոգիական, իրավական, քաղաքական և փիլիսոփայական փոխկապակցված տեսական և գործնական մակարդակներով գիտական վերլուծություններ: Ներկայացվող պահանջներից կարևորագույնը նոր գիտելիքի ձեռքբերումն է, որը պետք է նպաստի ՀՀ-ում քաղաքացիական հասարակությունում ընթացող խորքային գործընթացների, երևույթների, և դրանց փոխկապացվածությունն արդի գլոբալ և տարածաշրջանային իրադարձությունների հետ բացահայտմանը:

**5.Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը**

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ոչ միայն գիտական հոդվածների, ժողովածուների և մենագրությունների տպագրություն, գիտամատչելի հրապարակումներ թերթերում, ամսագրերում, հեռուստատեսությամբ, գիտաժողովների, քննարկումների կազմակերպում, այլև գիտաուսումնական գործունեության իրականացում՝ ասպիրանտների և դոկտորանտների պատրաստման եղանակով:

Տնօրեն՝ _____ ( Գ.Ա. Պողոսյան )
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Գ.Ա. Պողոսյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 2
«21» հունվարի 2015 թ.
N Ե-26 պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

**Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական**

**և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)**

(ծրագրի անվանումը)

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառման անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնաժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն) | Հայ հասարակության պատմական և մշակութային ավանդույթների, դրանց զարգացման միտումների ուսումնասիրությունը, ինչպես նաև արդի Հայաստանում քաղաքացիական հասարակության, իրավական պետության, սոցիալական և քաղաքական ինստիտուտների ձևավորման գործընթացների փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդրիների հետազոտությունն ու վերլուծությունը: | Տեսական վերլուծություններ, կիրառական ուսումնասի-րություններ, գիտաուսումնա - կան գործունեություն, գիտական քննարկումների, գիտաժողովների կազմակերպում | Գիտական հոդվածների, ժողովածուների և մենագրությունների տպագրություն, գիտամատչելի հրապարակումներ ամսագրերում, մամուլում, հեռուստատեսու-թյամբ, ասպիրանտների և դոկտորանտների պատրաստում: | 2015թ. դեկտեմբերի 31-ը | 50291,2 |
| Ընդամենը | | | | | | 50291,2 |

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մ. Մարտիրոսյան
(անուն ազգանուն)

(ստորագրություն)

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծրագրի գիտահան ղեկավար
(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
(կազմակերպության անվանումը)

Տնօրեն՝ Գ.Ա.Պողոսյան
(անուն ազգանուն)

(ստորագրություն)

(Գ. Ա. Պողոսյան)
(անուն ազգանուն)

Հավելված 3
«21» հունվարի 2015թ.
N 6-26 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Պայմանագրի գնի մասին համաձայնություն**
Հայ իրականությանմշակույթամա-փիլիսոփայական,սոցիալ քաղաքական
և իրավագիտական ուսումնասիրություններ
(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ.Մարտիրոսյանի և ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության սոց. և իր-քի ի-տը ի դեմս տնօրեն Գևորգ
կազմակերպության անվանումը)
Պողոսյանի. վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «21» հունվարի _ 2015թ. N6-26 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 50291.2 (հիսուն միլիոն երկու հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:
թվերով և բառերով

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

_____
(ստորագրության)

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության սոց.և իր-քի ի-տ
ք. Երևան Արամի 44
Հայէկոնոմբանկ կ-ն հ/հ 163008102549
ՀՎՀՀ 02508174
Տնօրեն՝ Գ. Պողոսյան

(ստորագրության)